գեղարվեստական արժանիքներով: Այս իմաստով պետք է զգույշ ու տարբերակված կիրառել ***գրական երկ*** և ***գեղարվեստական արժեք*** հասկացությունները: Դրանցից առաջինը լայն ընկալում է, իսկ երկրորդը առաջինի մասնավորություններից մեկը: Մասնավորապես, Մանուկ Աբեղյանն իր «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր հիմնարար աշխատության մեջ գրեթե յուրաքանչյուր պատմագրքի անդրադառնալիս անպայման խոսում է նաև դրա գրական արժեքի մասին՝ հաճախ կատարելով չափազանց ուշարժան դիտարկումներ, բայց միշտ չէ, որ տարբերություն է դնում վերը նշված հասկացությունների միջև, այն դեպքում, երբ, ինչպես նրա որոշ վերլուծություններն են վկայում, հստակ տարբերակել ու գիտակցել է այդ հասկացությունների սկզբունքային տարբերությունները[7]:

Խնդրին համակարգված մոտեցման առումով հիշատակելի է հատկապես Մայիս Ավդալբեգյանի՝ 1971-ին լույս տեսած «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը» (V դար) մենագրությունը, որում ոսկեդարի հայ պատմագրության ընձեռած գրանյութի սահմաններում գրականագետը հայ գեղարվեստական արձակի ձևավորման ակունքներում դիտարկում է նաև Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի երկերը: Ավդալբեգյանը, ելնելով իր աշխատության խնդրադրությունից, իրավամբ շրջանցել է զուտ գրական մի շարք իրողություններ (ժանրային համակարգ, կառուց-

---

[7] Մասնավորապես՝ Անանիա Շիրակացու մատենագրության առիթով իբրև գրական հատկանիշ է դիտվում «շարադրելու արվեստը», իսկ Սեբեոսի աշխատության պարագային Աբեղյանը նկատում է. «***...չունի սպեցիֆիկ գրական նշանակություն, որովհետև դա չի հորինված գեղարվեստորեն***: Բայց դրա մեջ կան վիպակներ, զրույցներ, որոնք ծագում են բերանացի բանաստեղծական ավանդություններից, դրա համար և պատմված են մասամբ կենդանի ձևով: ***Այդպիսի հատվածների մեջ Սեբեոսի աշխատությունը գրական նշանակություն էլ է ստանում***» (տե՛ս ***Մանուկ Աբեղյան,*** Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Անթիլիաս, 2004, էջ 406 և 415, ընդգծումը մերն է–Ա.Ն.):